

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԻՐԱՆԻ ԽՈՒՁԻՍՏԱՆ ՄԱՐԶՈՒՄ**

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս. ՍԱԼԵՍԻ

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, ասպիրանտ

Խուզիստանի մարզում, ինչպես և ամբողջ Իրանում, գործազրկությունը մեծ չափերի է հասնում: Ընդ որում, այն ունի մեծանալու միտում: 1966 թ-ին Իրանում գործազուրկ է եղել աշխատուժի 3.6 %-ը: 1996-ին՝ 9 %-ը, 2001-ին՝ 14.5 %-ը, 2004 թ-ին՝ 11.5 %-ը, 2012-ին՝ 12.3 %-ը:

Պետության աջակցությամբ քաղաքային բնակավայրերում ստեղծվում են նոր աշխատատեղեր, ասկայն նույնը չի կարելի ասել գյուղական բնակավայրերի համար: Գյուղական բնակավայրերի գործազուրկները տեղափոխվում են քաղաքներ՝ ավելացնելով քաղաքների տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, բարոյահոգեբանական խնդիրները: Այս երևույթից խիստ տուժում են նաև գյուղական բնակավայրերը, որոնք զրկվում են իրենց երիտասարդներից, զարգացման, գոյատևման ներուժից: Մինչդեռ գյուղի պահպանումն ունի տնտեսական, սոցիալական, ռազմավարական կարևոր նշանակություն: Գյուղը որպես բնակավայր, ազգի ու ազգայինի պահպանման գրավականն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսությունը «սպառել» է նոր աշխատատեղերի ստեղծման կարողությունները: Խնդրի լուծման գլխավոր ուղին մնում է ոչ գյուղատնտեսական ոլորտների զարգացումը՝ փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը:

Փոքր ձեռներեցության զարգացման համար անհրաժեշտ է բարձրացնել գյուղական երիտասարդության կրթության մակարդակը: Այս խնդրի լուծման համար ստեղծվել է ուսումնարանների լայն ցանց: Սակայն, ինչպես փաստերն են ցույց տալիս, գործազուրկների մեջ ավելի մեծ է ուսումնարանների շրջանավարտների տեսակարար կշիռը: Միջին մասնագիտական կրթություն ստացած երիտասարդներն անցնում են զինվորական ծառայության, այն ավարտելուց հետո չեն կարողանում աշխատանք գտնել: Ըստ Շարիատ Ջատեի (2003) զինվորական ծառայությունն ավարտածների միայն 6.5%-ն է սկսում

աշխատել գյուղատնտեսության մեջ, 57 %-ը լրացնում է գործազուրկների բաժանակը, մի մասն ընդունվում է բուհեր:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է գյուղերում ստեղծել նոր աշխատատեղեր, որի իրագործման լավագույն ձևը փոքր ձեռնարկատիրությունների զարգացումն է: Այն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել 2 հարց.

1. Բացահայտել այն սահմանափակումները, որոնք կան գյուղական բնակավայրերում ներդրողների առաջ:

2. Գտնել, թե ինչպիսի ներուժ կա երիտասարդների ձեռներեցության զարգացման համար:

Այս հարցերի էությունը պարզելու համար կատարվել է սոցիալական հարցում, որը հնարավորություն է տվել որոշելու ձեռներեցության կազմակերպիչների և հավակնորդների կարծիքը ձեռներեցության նշանակության մասին:

Կատարվել է երեք՝ տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտների մասին հարցումներ:

Առաջին դեպքում տրվել է հետևյալ հարցը, թե ի՞նչ տնտեսական նշանակություն ունի գյուղական ձեռներեցությունը: Սոցիալական հարցումը իրականացվել է երեք խմբի՝ ուսումնական հաստատությունը ավարտածների (աշխատանք փնտրողների), մենեջերների և իշխանության ներկայացուցիչների միջև: Չարցմանը մասնակցել է 2445 մարդ: Ինչպես երևում է աղույսյակ 1-ում երեք խմբի ներկայացուցիչների 57.6-65.0%-ը լիովին համաձայն են, որ գյուղական ձեռներեցությունը՝ փոքր և միջին ձեռներեցությունը, կարող է տնտեսապես դրական օգուտներ բերել: Ընդ որում, գյուղական ձեռներեցության տնտեսական օգուտների մասին լավ կարծիք ունեն իշխանության ներկայացուցիչների 88.8%, մենեջերների 90.4% և ձեռներեցության հավակնորդների 83.7%-ը:

Այսպիսով՝ գյուղական ձեռներեցության տնտեսական օգտակարության մասին դրական կարծիք ունեն հարցման ենթարկվածների ընդհանուր թվի 85.4%-ը: Թերահավատների տեսակարար կշիռը ամենից բարձր է ձեռներեցության հավակնորդների մեջ՝ 16.3%, ամենից ցածր է մենեջերների մոտ՝ 9.6%:

Գյուղում փոքր ձեռներեցության զարգացումն ունի նաև մշակութային նշանակություն: Այն այնքանով է կարևոր, որքանով որ գյուղը երկրի և ազգի համար. առաջին հերթին մշակութային արժեքներն այստեղ ավելի լավ են պահպանվում, դարերից մեզ հասած ազգային ավանդույթները, սովորույթներ-

րը, հմտությունները, ոգին: Այստեղ ազգային լինելն է, որն էլ պետականության երաշխավորն է: Գյուղական ձեռներեցության մշակութային հարցման ենթարկված 1556 հոգուց 51.5-62.5%-ը լիովին համաձայն են մշակույթի կարևորությանը, 25.0-30.8%-ը համաձայն են: Այսպիսով՝ հարցման ենթարկվածների 76.5-93.3%-ը կարևորում է գյուղական ձեռներեցության դերը մշակույթի զարգացման գործում: Թերահավատների տեսակարար կշիռը ընդհամենը 11.7-17.7% են (մանրամասն տես աղույսակ 3):

Գյուղում պահպանվում են նաև քաղաքական, ազգային, պետական հանազգային արժեքները:

Աղույսակ 1

Կարծիքներ գյուղական ձեռներեցության տնտեսական նշանակության մասին

Ձեռնարկության բովանդակությունը	Հարցման ենթարկված խմբեր	Կարծիքներ			
		Տեսակը	Մասնակիցների քանակը		
			Մարդ	Տոկոս	
Տնտեսական	Ձեռներեցության հավակնորդներ (շրջանավարտներ)	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	296	16.3	
		Համաձայն են	473	36.1	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	1046	57.6	
	Մենեջերներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	53	9.6	
		Համաձայն են	162	29.5	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	335	60.9	
	Իշխանության ներկայացուցիչներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	9	11.2	
		Համաձայն են	19	23.8	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	52	65.0	
	Ընդամենը			2445	100

Աղյուսակ 2

Կարծիքներ գյուղական ձեռներեցության մշակութային նշանակության մասին


Ձեռնարկության բովանդակությունը	Հարցման ենթարկված խմբեր	Կարծիքներ			
		Տեսակը	Մասնակիցների քանակը		
			Մարդ	Տոկոս	
Տնտեսական	Ձեռներեցության հավակնորդներ (շրջանավարտներ)	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	193	17.7	
		Համաձայն են	395	30.8	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	561	51.5	
	Մենեջերներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	42	11.7	
		Համաձայն են	129	35.9	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	188	52.4	
	Իշխանության ներկայացուցիչներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	6	12.5	
		Համաձայն են	12	25.0	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	30	62.5	
	Ընդամենը			1556	100

Աղյուսակ 3

Կարծիքներ գյուղական ձեռներեցության քաղաքական նշանակության մասին

Ձեռնարկության բովանդակությունը	Հարցման ենթարկված խմբեր	Կարծիքներ			
		Տեսակը	Մասնակիցների քանակը		
			Սարդ	Տոկոս	
Տնտեսական	Ձեռներեցության հավակնորդներ (շրջանավարտներ)	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	361	16.6	
		Համաձայն են	617	28.3	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	1200	55.1	
	Սենեջերներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	50	7.6	
		Համաձայն են	193	29.2	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	660	63.2	
	Իշխանության ներկայացուցիչներ	Մասնակի են համաձայն (թերահավատներ)	14	14.6	
		Համաձայն են	29	30.2	
		Լիովին են համաձայն (լավատեսներ)	53	55.2	
	Ընդամենը			2934	100

ՊՃ.1. Փոքր ձեռնարկատերերը, որպես գյուղական բնակչության զբաղվածության միջոց (սոցիալական հարցման արդյունքները տոկոսներով)



Այստեղ քաղաքական և մշակութային արժեքները գոյատևում են միասին: Դրանք համատեղ, աստիճանաբար նպաստում են տնտեսական գործունեի զարգացմանը, տնտեսական առաջընթացին:

Գյուղական ձեռնարկության քաղաքական բովանդակության մասին կատարված հարցմանը մասնակցել են 2934 մարդ: Նրանց բացարձակ մեծամասնությունը՝ 68.8%, դրական կարծիք ունեն գյուղական ձեռներեցության քաղաքական նշանակության մասին: Ընդ որում՝ այս հարցման մեջ ամենից լավատեսը մենեջերներն են, երկրորդ տեղում իշխանության ներկայացուցիչներն են (մանրամասն տես՝ աղյուսակ 3):

Այսպիսով՝ հարցման ենթարկվածների մեծամասնությունը այն կարծիքին են, որ գյուղական ձեռներեցությունն ունի տնտեսական, մշակութային և քաղաքական նշանակություն: Ընդ որում՝ ձեռներեցության այս երեք հատկա-

նիշների վերաբերյալ ամենալավատեսը իշխանության ներկայացուցիչներն են, ամենից թերահավատը ձեռներեցության հավակնորդներն են: Նրանց թերահավատությունը գործող համակարգի վերաբերյալ է, որտեղ.

- գյուղական ձեռներեցների անպաշտպանությունն է,
- աշխատանքը ձեռնարկելու նախապայմանների անբավարարությունը,
- ներդրումների քչությունը,
- գյուղական ձեռներեցների իրավական պաշտպանության գործող մակարդակը,
- աշխատատեղերի համար արտադրանքը ստանալու բարդությունը:

Եզրակացնելով կարելի է ասել, որ բոլոր երեք խմբի ներկայացուցիչների կարծիքների մեջ մեծ տարբերություններ չկան, ուստի խմբերի դրական լուծումը բոլորինն է: Իսկ դրան կարելի է հասնել համալիրային մոտեցումով:

***Բանալի բառեր** - գործազրկություն, ձեռներեցություն, մշակույթ, համալիրային, լավատեսություն, համաձայնություն, սոցիալական*

Գրականություն

1. **Shariat Zadeh**, m(2003) Considering education and employment situation of agriculture highschool new system graduates in ran teaching and training chapter, teaching and training searching place, nineteenth year, number 4, winter
2. **Salmi**, M(2005) Considering employment of technical – pobessional and work knowledye gpaduates of khoosestan province menagering and pragpeming organisation of kosestan province, seerch design Bahman

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ ПОСЕЛЕНИЙ В ХУЗИСТАНСКОЙ ОБЛАСТИ ИРАНА

А. Р. АВАГЯН

Доктор географических наук, профессор

М. САЛЕМИ

Гражданин Исламской Республики Иран, аспирант

В сельских поселениях области Хузистана Республики Иран безработица населения на сегодняшний день достигла высокого уровня, в связи с чем эмиграция медленно продолжает расти.

Для решения данной проблемы нами был предпринят социологический опрос среди представителей властных структур, предпринимателей, менеджеров. Результаты опроса позволили прийти к единому мнению: для создания рабочих мест в сельских местностях должны развиваться средний и малый бизнес.

THE RURAL DEVELOPMENT ISSUES OF KHUZESTAN PROVINCE IN IRAN

A. R. AVAGYAN

Doctor of Geographical Sciences, Professor

M. SALEMI

Citizen of Islamic Republic of Iran, Researcher

The population has reached a high level of unemployment as a result of which emigration continues to grow in Khuzestan province, Islamic Republic of Iran. For solving the problem a sociological survey was conducted in the circle of government officials, entrepreneurs and managers. Taking into account the results of the survey it was concluded that small and middle enterprises should be developed in order to create working places.